Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Ս. Գևորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Կենսաբանություն>> /18 դասաժամ/, <<Մաթեմատիկա>> /23 դասաժամ/ և <<ՆԶՊ>> /8 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3*4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3.Անձը հաստատող փաստաթուղթ,

4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5.Ինքնակենսագրություն (Ձև 5),

6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում է: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 2025 թ. դեկտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ 10:00-15:00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. դեկտեմբերի 25-ի՝ ժամը 13:00-ին,** ՀՀ ԿԳՄՍՆ «Ս.Գևորգյանի անվան հ.189 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Դավիթաշեն 1-ին թաղամաս:

Տեղեկությունների համար զանգահարել 010 36 92 20 հեռախոսահամարով: